

ԲՍՁՄԱՎԼԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲՆՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲՍՐՈՅԱԿԱՆ

ՌՅԿՁ - ՌՅԿԷ

Հ Ա Ց Ո Ր

Ձ Դ



1927

Յ Ո Ւ Ն Ի Ս

Թ Ի Ի 6

ԲՈՒՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՏՐԱՊՈՒՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 137)

Բ. — Կը մնայ մեզ քննել պահ մը նաև այդ մետրապոլիտոսիքան ունեցած իրաւունքներն այն օրէն՝ ուր այդ պատիւն իրօք երևցաւ ի Հայս. և տեսնել՝ ինչ էր իսկապէս Օրբելեանէն վազարշապատուողին մէջ երգուած

«Երկնաբատակ տունըն Սիւնի՝
Որ անմարմնոցն է սըխրալի,
Բոլոր բնաւիցըս բաղձալի
Որպէս ըզդրախտն Աղեւնայի.
Կացեալ պարէտ բարձր ի դիտի,
Պոստօփրոնտէս Հայոց կոչի»:

1. «Գործ է սոցա, կ'ըսէ նոյն հեղիւնակը, ձեռնադրել զեպիսկոպոս գաւառաց. վասն որոյ երկոտասան եպիսկոպոսաց զլուրի կարգեցաւ՝» Կ'ակնարկէ ընդհանուր մետրապոլիտաց ձեռնադրելու իշխանութեան, զոր Սիւնեցին թէպէտ չէր կարող գործադրել, բայց անոր զօրութեամբ՝ 12 եպիսկոպոսաց զլուրի էր, կ'ըսէ, կամ իրաւունք ունէր լինելու, եթէ կարենար

ունենալ իւր վիճակին մէջ: Մեք տեսանք առաջին մետրապոլիտին ապստամբութիւնը կաթողիկոսէն, իւր կողմ շահելով «զբաւզումս ի սուրբ եպիսկոպոսաց», որոնք յայտնի է՝ թէ իւր հպատակները չէին: Օրբելեանը վկայեց՝ թէ Սիւնեաց առաջնորդ ընտրուեք է «մերոց եպիսկոպոսաց» առաջարկութեամբ¹. Բայց չի հշդեր՝ քանի հոգի էին: Կրկին անգամ կը պատմէ՝ թէ 1286ին ձեռնադրուեք է «մետրապոլիտ մեծ աթոռոյն Սիւնեաց» ի վերայ այլոց եպիսկոպոսացն, որ կային աստ և անդ՝ ոմանք ի վայոց ձոր և ոմանք ի Տաթև², ուր էր իւր աթոռն ալ: Յայտնի է՝ որ այդ եպիսկոպոսունք վիճակաւորներ չէին, այլ մենաստանաց մէջ ապաստանած մարդիկ, որոցմէ Տարսայիճի 1274ի արձանագրին մէջ ևս կը յիշուին ի Տաթև «եպիսկոպոսք տեղւոյս տէր Հայրապետ

1. Օրբել. 18. — 2. Աս.՝ 140. — 3. Օրբել. 313.



(վիճակ. Սիւնեաց) և տէր Սողոմոն», և «տէր Սարգիս՝ Նորավանհից եպիսկոպոս»¹։ Սակայն մետրապոլիին հպատակ եպիսկոպոսները թեմեր ալ ունենալու էին, որոցմով կազմուէր մետրապոլտական մեծագոյն վիճակը։ Ընդ հակառակն Օրբեւիճանի յիշածներն օր մը կան, միւս օրը չկան։ Ինք անոցմէ երկու հոգի միայն ունի, «տէր Գրիգոր»՝ որ էր ազգական տեառն Յովհաննիսի, և տէր Սարգիս որ է Նորավանհ», որոնք առ Անաւարդեցիին հաւաքականին մէջ ալ կ'երեխին²։ Իսկ իւր յաջորդն առ կոստանդին թղթին մէջ հնար մէկ հոգի միայն ունի, ինչպէս տեսանք վերև։ Մեծաբանութիւն է ուրեմն պատմը ինչն ցոյց տուածները, չոմանք ի վայոց ձոր և ոմանք ի Տաթև»։ Եւ Սիւնեաց հովիւն երբեք չէ ունեցած վիճակաւոր հպատակներ, ճշմարիտ եպիսկոպոսներ, ինչ որ պատմիչն ինքնին կը հաստատէ տեղ մը, ըսելով՝ թէ իրենց մետրապոլտութեան Արբահամէ կարծեցեալ հաստատութեան պահուն՝ «Ինդրեցիին ի Սիւնեաց մի՛ ինչ աւելի իրս ժողի, այսինքն եպիսկոպոս ունիլ ընդ ինքեամբք և ձեռնադրել»³։ Այս է ստուգութիւնը։

2. Պատմչին յաջորդը՝ Յովհաննէս՝ 1331ին կու տայ մեզ իւր վիճակին սահմաններն ալ, կոչելով զինքը «տէր և վերատեսուչ, զահեբելց և զլուբս արհի երից աթոռոցս Սիւնեաց, Տաթևոյ և Նորավանհից և Յախացքարոյ, պետ երկոտասան զաւառաց»⁴, ինչպէս ըսաւ նախորդն ալ⁵։ Երեք վանքերդ զլիւսաւոր կեղորոններն էին։ Տաթևը սովորական աթոռն էր եպիսկոպոսին։ Ասոր աւերմամբ՝ ժամանակ մը Նորավանքն եղաւ «տուն աթոռոյ եպիսկոպոսութեան» Ստեփանոսի⁶։ Նոյնպէս և յաջորդին Սարգսի⁷, երբ աթոռը բաժնուեցաւ իւր և Յովհաննու միջեւ⁸, վերջինս նստելով ի Տաթև⁹։ Ըսն բնակեցաւ

նաև յաջորդը Ստեփանոս¹⁰։ Իսկ յիշեալ 12 զաւառները՝ ոչ եպիսկոպոսականք, այլ աթոռին եկամտի ազրիւրներն էին, ինչպէս յայտնի կը նկարագրէ պատմիչը¹¹։

3. Ստոյգ է, և Անանիա կաթողիկոսն իսկ վկայեց՝ թէ Սիւնեաց առաջնորդն անոր ժամանակ կը նկատուէր «զլուբս եպիսկոպոսաց տանն Հայոց», զոր Օրբեւիճան իրեն համար ալ կը կենց, մեկնելով իբր «նախաթոս» կաթողիկոսին¹²։

4. «Առանց սոցա, կը յարէ վերջինդ, ոչ ձեռնադրի պատրիարքը Հայոց, և ոչ լինի ժողով (ընտրութեան), այլ զլուբս և հրամանատար ժողովոյ սոքա լինին»¹³։ Իւր բարի բաղձանքն էր այդ։ Զի 1290ին Ստեփանոսի ընտրութեան հրաւիրեցաւ ու չգնաց¹⁴, հաւան չլինելով նախորդին հրաժարեցման¹⁵։ Յետոյ 1293ին «առնէ ժողով թագաւորն Հեթում և տայ ձեռնադրել կաթողիկոս Հայոց» զԱնաւարդեցիին¹⁶։ Երացատրութիւնէս յայտնի է՝ որ ինք ներկայ չէր և ոչ այդ ընտրութեան, ինչպէս եղիւր էր կանխաւ թ կոստանդին, հոն ձեռնադրուելու զնացած լինելով։ «Ընդ որս էր և մեր նուաստութիւնս»¹⁷, կ'ըսէ։ Վերջին բացակայութիւնդ էր, որ համոզեց զինք՝ թէ առանց Սիւնեաց կաթողիկոս չի կարգուիր. պահանջ՝ զոր բնականապէս ինք միայն կրնար զգալ։ Չամչեան, Խնձրճեան և Ալիշան կը յիշեն՝ առանց ազրիւր ցոյց տալու՝ կանոն մը, թէ առանց մասնակցութեան Բջնոյ, Հաղբատայ, Արտագու և Տաթևոյ արքեպիսկոպոսաց՝ կաթողիկոս չի ընտրուիր¹⁸։ Բայց պատմական չէ կանոնըդ, ապացոյց՝ որ Սիւնեաց պատմիչն ևս իրեն միայն կը վերագրէ իրաւունքը։

5. Սահակէն ու Մեարտէն, կը շարունակէ Օրբեւիճանը, «նախաթոս վարդապետութեան և հրաման մեկնութեան և թարգմանութեան» սոցա միայն շնորհեցաւ ի մէջ Հայոց¹⁹։ Դատարկ խօսք. մեր հնա-

1. Նոյն՝ 306. Սիսակ. 232. — 2. Օրբեւ. 314, 337. 3. Օրբեւ. 77. — 4. Արգաթ, 273. — 5. Աստ՝ 141. — 6. Օրբեւ. 257. — 7. Օրբեւ. 262. — 8. Նոյն՝ 259. — 9. Նոյն՝ 268. — 10. Նոյն՝ 264. — 11. Նոյն՝

371-79. — 12. Աստ՝ 140. — 13. Օրբեւ. 18. — 14. Հանգ. ամս. 1921, 180. — 15. Օրբեւ. 320. — 16. Նոյն՝ 326. — 17. Օրբեւ. 320, 350. — 18. Չամբ. Գ. 37. Հնախա. Գ. 254. Սիսակ. 19. — 19. Օրբեւ. 18.

գոյն՝ լուսագոյն և բազմագոյն վարդապետը ու թարգմանիչը չեն տեսեր Սիւնիքը, որ ս. Մեսրոբայ օրով զեռ նոր կը սթափէր իւր բարոյական թմրութենէն¹, և որ և է գրական արժէք չունէր տակաւին, ոչ ալ ակնհերև թարգմանիչ կամ գրիչ մը տուաւ ոսկեղէն դարուն. և վայոցձորեցի Յովսէփայ գրաւորը գործունէութիւնը չէ յիշուած:

Այդ անգոյ պարծանքներէն գանձ այժմ իրականաց:

6. Նոյն վիճակաւորին պատիւներէն էր՝ իբր թէ Աբրահամու օրերէն՝ «բարձակից ու սեզանակից (լինել) կաթողիկոսին՝ աթոռով և բարձու ի միասին բազմաւ՝»²: Ոչ մէկ պատմական փաստ այս մասին: Շփոթութիւն է վաճանայ ակնարկած բազմակերեց³: Ազնուականաց ու բարձր եկեղեցականաց յատուկ էր նստիլ բարձերու վրայ⁴, որ իրենց աստիճանին համեմատ կերպ կերպ զարդարուած էին: Սիւնեաց պաշանջն էր՝ հայրապետականին հաւասարն ունենալ, «ոսկէնկար» կամ «ոսկեթել»⁵: և վաճանայ հրաժարումը՝ ցոյց կու տայ՝ որ իւր նախորդ ինքնակոչ մետրապոլիտը գործածներ էր զայդ:

7. Նա ունէր խաւս ալ, յիշուած՝ ժամանակի սխալով՝ Աղուանից և Սիւնեաց պատմիչներէն ու Մաշտոցէ ևս⁶, զոր երկրորդը կը բացատրէ՝ «գիտչանիչ նշանն զատաջեաւ կրել հանապազ»: Հայրապետին իրաւունքն էր այս⁷, զոր Յակոբ իւրացուցեր էր, և վաճան կը թողուր. և եթէ պէտք է հաւատաւր, Սարգիս կթղվերստին կը շնորհէ⁸:

8. վաճան կը հրաժարի գառազակէն ալ, որ սակայն եպիսկոպոսական աստիճանին ևս յատուկ էր⁹, կ'երևի թէ հող խնդիրը ճոխութեամբ սովորականէն վեր զարդի մը կը նայի, «զմեծացիկ ցառագան», ինչպէս կ'ըսէ պատմիչը, որ հայրապետա-

կանին կը տանի մեր միտքը¹¹, և զոր իբր թէ Սարգիս կթղվ. կը թոյլատրէ Յովհաննու¹²:

9. Հայոց հայրապետը միջին դարուն ունէր իւր սեփական դրօշն ալ, զոր նոյնպէս անոր ըովէն կը տանէին¹³: Օրբելեան կ'ուզէ՝ որ Ե դարուն Աղուանից արքայն Եսովաղէն՝ Սիւնեաց Անանիա եպիսկոպոսին շնորհած լինի «զիւր բաղատրական դրօշն կարմիր և ոսկետուն վարու, ու ներով ի գլուխն գունտ ոսկի, և ի վերայ խաչ պատուական», անոր առջևէն տանելու պայմանաւ: Միանգամայն կը կարծէ՝ որ Անանիայէ արգիլուելով, Սարգիս վերջատին կ'արտօնէ¹⁴: Այլուր հաւատած եմ՝ որ Սիւնեցիք զայդ հայրապետականէն առին¹⁵:

10. Օրբելեանն ինք զինքը «կրկին բագի» մեծարուած ըսաւ ի կրկիկիս¹⁶. այն է մի «թագ պատուական» կաթողիկոսն, և մի «թագ պատուական ի համակ ոսկույ»՝ թագաւորէն, որոնք կը նշանակեն միթըր, այն ժամանակ զեռ անընտել արևելեան եպիսկոպոսաց. նոյնպէս և մի «խոյր ոսկեթել մարգարտայեռ յորինուածով», որ է կնկուղը¹⁷: Դարձեալ «զգեցուցանենն նմա զհայրապետական զգեստն ոսկեթել հիւսուածով», և Լևոն կը նուիրէ անոր «ի թագաւորական զգեստուց ըստ հայրապետական ձեռնն»¹⁸: Սոյ մէջ ընդունած լինի թէ ոչ այդ բոլոր հայրապետական պերճութիւնը, կրնանք ապահով լինել թէ ճարտայեռի որդին չէր վարաներ կրել զայն իւր վրայ:

11. Գէպ ի միջին դար կ'երևի հայրապետական հոգևոր տէր տիտղոսը, սովորաբար միասին գործածուած աստուածապատի մակզրին հետ. ինչպէս՝ «հոգևոր տեսանդ», կ'ըսէ Մաշտոց առ Գէորգ¹⁹. և ճառտուածապատի և հոգևոր տէր Անանիա Հայոց կա-

1. Աստ՝ 79, — 2. Օրբել, 76, — 3. Աստ՝ 286, — 4. ձաթ, 64, — 5. Օրբել, 16, 17, 208, — 6. Աստ՝ 193, — 7. կազան, 218. Օրբել, 76. Արքա, 1902, 762, — 8. Ճմտ. Մոկացիք՝ Արքա, 143, 144. Ռու. 210, 241. վրչն, 104, 113. Օրբել, 63, — 9.

Օրբել, 222, — 10. Պատ. տրգ. 384, — 11. Արչ՝ 400, — 12. Օրբել, 222, — 13. վրչն, 86, — 14. Օրբել, 17, 222, — 15. Հայ ցոյր. 89-92, — 16. Աստ՝ 140, — 17. Ճմտ. Պատ. տրգ. 386-88, — 18. Օրբել, 314, — 19. Արքա, 1902, 753.

թողիկոս» կը գրէին 958ին վաճան եպս. և իշխանը Սիւնեաց¹, Նոյնը կը տեսնենք արուած Սարգսի² 1010ին, Պետրոսի³ 1086ին, Գրիգոր մեծ վկայասիրի⁴, և յաջորդաբար այլոց, Չայս ալ կ'իւրաքանն Սիւնեաց առաջնորդները, սկսելով նոյն իսկ մետրապոլիտութենէն յառաջ. ինչպէս 867ին տիկին Գուպղիդուխտ կը գրէ. «գաստուածապատիւ և գնոցեար տէր Սողոմոն Սիւնեաց եպիսկոպոս»։ և զոր հետ զհետէ կ'ընծայեն, միշտ խառն ձեով, Զուանշիր 871ին՝ նոյն Սողոմոնի. Հրաչոտ 884ին՝ Գաւթի, Սիւնեաց իշխանը 906ին՝ Յովհաննու. Փիլիպէ 943ին՝ Յակոբայ. Սմբատ 963ին՝ վահանայ. Հասան 1086ին՝ Գրիգորի⁵, Սիսական ազատաց հետ օտարներ ալ զիտեն զայդ ու կը կրկնեն երբեմն, ինչպէս Գր. Մագիստրոս՝ Յովհաննու⁶։

Անշուշտ Սիւնեաց օրինակով էր՝ որ նոյն տիտղոսը բացառաբար կը տրուէր երբեմն նաև ուրիշ եպիսկոպոսաց ոմանց. ինչպէս Գաւթի մէջ 992ին՝ և Գագիկ արքայ՝ Արշարունեաց Սահակ եպիսկոպոսին⁷. Յովհաննէս ԲԸՆ. 1215ին՝ Անույ Գրիգոր արքեպիսկոպոսին⁸. և Կիրակոս ոմն վահանայը՝ Ամարասայ Յովհաննէս եպիսկոպոսին⁹։

12. Կաղանկատուացւոյն շարունակողը կը յարէ, և Օրբելեանը կ'առնու կը կրկնէ՝ թէ մետրապոլիտական պատիւը, Արքանամու օրբէն՝ ինչպէս իրենք կը կարծէին, իրաւունք տուեր է Սիւնեաց՝ «ոչ քարոզել եպիսկոպոսապետ զհայրապետն... Վասն այնորիկ չքարոզեն եպիսկոպոսապետ Սիւնիք, և ոչ գրեն ի պատասխանին՝ Հոյոց եպիսկոպոսապետ», պատճառաբանելով՝ «զի թէ քարոզելի էր, սպա և գրելի»։ Եւ զարձակ թէ «վասն տեան Եղիայի (Կթղ.) խակագործութեան յԵրիցոյ վանս» Սիւնեաց, որ մեզ անծանօթ է, անոնք իրենց

թղթոց մէջ կաթողիկոսին «ոչ գրեցին ի ծասայէ», որոյ համար հայրապետն ալ կը խափանէ «հոգևոր տէր» կամ «ստատուածապատիւ և հոգևոր տէր» շքանունը՝ զոր իբր թէ ինքն և ու կու տար անոնց. և թէ այս գանցառութիւնը երկուստեք կը մնային դեռ Սիւնեաց պատմչին ժամանակ¹⁰, Այս ամէնը կը կրկնէ և Մաշտոց, զոր «այդպէս զիտեմ, կ'ըսէ, ի լրոյ¹⁰»։

Սիւնեաց աթոռը, վատահացած իւր լեռներուն, մերթ ամբողջովին, — չհաշուելով Չ զարուն Պետրոսի վերագրուած ապրուստամբութիւնը¹¹ որ հիմ չունի, — և ընդհանրապէս կիսովին անկախ սպրեցու հայրապետական իշխանութենէն, մանաւանդ երբ սա հաստատուեցաւ հետո՝ Կիլիկիոյ մէջ։ Բայց երբ վաճան Անանիայի ձերաններուն մէջ բռնուեցաւ, չվարանեցաւ իւր ձեռնարկին մէջ զրել՝ թէ «անձն իմ եղիցի ծառայ և հոգի իմ պաշտօնեայ Լուսաւորչի աթոռոյր¹²»։ Իրենց այդ անկախութեան հոգին էր՝ որ շահեցու նաև խախուտ մետրապոլիտութիւնը, հաստատուած արտաքին ձեռքու և զարդերու վրայ, և ոչ նուիրապետական իրաւանց, զոր չունէին և չէին կարող ունենալ։ Վասն զի, դարձեալ կը կրկնեմ, Հայոց իսկական մետրապոլիտը՝ Լուսաւորչի աթոռը զբաւոռն էր միայն¹³։

Գ. — Սիւնեաց օրինակէն քաջալերուած, զլուր բարձրացուց Արտագու աթոռն ալ, յեցած իւր առաքելականութեան աւանդութեանը վրայ¹⁴, որ տրամաբանօրէն աւելի իրաւունք մը կու տար իրեն քան միւս եպիսկոպոսաց։ Չգալի է այս 1290ի յիշատակաւանի մը մէջ, ուր թորոս կը պատմէ իւր պատգամաւորութիւնը Հեթմոյ կողմանէ՝ արևելեան եպիսկոպոսաց և իշխանաց, հրաւիրելու զանոնք Գրիգոր Անաւարզեցոյ ընտրութեան։ «Եւ մեզ հրա-

1. Արք. 1897, 141-43. — 2. Տեղգր. 117, 121. — 3. Հրպ. 352. — 4. Օրբել. 159, 158, 152, 168, 196, 210, 240. — 5. Աստ. 140. — 6. Տեղգր. 196, 197. — 7. Անդ. 183. — 8. Արք. 91. — 9. Կա-

ղանկ. 218-19. Օրբել. 76-77. — 10. Արք. 1902, 763. — 11. Կաղանկ. 217. Օրբել. 65. — 12. Արք. 1897, 141. — 13. Աստ. 1926, 163. — 14. Աստ. 291.

մայեալ, կ'ըսէ, ի թագաւորէն և ի սուրբ ժողովոյն՝ յասալագոյն (իբրև առ նախա- մեծար աթոռ) գալ ի դիրս սուրբ առա- քելոյն թաղէոսի, առ գերահռչակ և ար- ժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացուն, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս առա- քելոյն թաղէոսի, և յայսմ ժամանակի փայլէր իբրև զլահ վառեալ ի մէջ գի- շերի»։ Աւթ տարի յառաջ հոն գնացեր ու մեծարուեք էր նաև Հեթում արքայ՝։

Քան զՏիրացուն գերազանցեց իւր յա- ջորդը Չաքարիա ծործորեցի, որոյ ջան- քերը յօգուտ իր աթոռին մեծութեան նը- կատեցինք կանխաւ՝։ (Իբրեւեանի յաջորդը Յովհաննէս, նուազ իւրիստ քան զայն, առ Չաքարիա թղթին մէջ զայն կը կռչէ «Էքսարխոս (ΕΞΑΡΧΟΣ) Հայոց՝, ինչ որ յոյն եկեղեցւոյ մէջ կը նշանակէր պատիւ մ'ընդ մէջ պատրիարքութեան ու մետրա- պոլտութեան. և մեր պարագային՝ առա- ջին կամ զլիսաւոր հայ եպիսկոպոսական դասին մէջ՝ յետ կաթողիկոսին։ Կը կար- ծեմ՝ թէ Ծործորեցին իրապէս ալ կը կրէր այդ տիտղոսն իւր անձին վրայ. զի սիւ- նեցւոյն թուղթը յանդիմանական էր, և շողմեծու աեղի չկար։ Ապա կ'ընդունէր նա անոր նախաթոռութիւնը, հակառակ իւր նախորդին պահանջման ի նպաստ իրեն։

Յովհաննէս միանգամայն կը հաստատէ անոր մեծ ազդեցութիւնը հայ եկեղեցւոյ մէջ և հայրապետին վրայ՝ հետեւեալ խօս- քերով. «Նամակ ողջունի և հրամանաց ընկալաք», կ'ըսէ, որով «զմեզ յորդո- րեալ էիք ի ճշմարտութեան խոկումն և ձեր հրամանաց կատարումն»։ Եւ կը յարէ՝ թէ «երզմամբ չափ քակեա գեկեղեցի Աս- տուծոյ, և զհնազանդեալքս հոգևոր զլիսոյն օժտեա, երբեմն իշխանարար սաստերով, երբեմն զիրս և խօսս շարախօսութեամբ առ հոգևոր տէրն առաքելով. և ի նմա- նէ մեզ սաստ և սպառնալիս տաս բերել. յաղագս յայտրիկ ի տարակուսի եմք»։ Յայտնի է որ Չաքարիայի դիրքն աւելի բարձր ու զօրաւոր է հոգ քան իւր սիւ- նեցի պաշտօնակցին։

Տեսանք նաև Քոնսեցւոյն վկայութիւնն անոր մասին, որուն արքեպիսկոպոս տիտ- ղոսն ալ կու տայ՝։ Նոյնը կը գտնենք և յիշատակարանաց մէջ. ինչպէս 1321ին, «արքեպիսկոպոսին Չաքարիայ՝ սուրբ ա- ռաքելոյն թաղէոսի վերադիտողի»։ և 1332ին՝ «տէր Չաքարէ արքեպիսկոպոս»։ Կ'երևի թէ Էքսարխոսն ընդհանրացած կու- չու՞մ մը չէր։ 1392ին աւետարան մ'է գրուած հոն՝ «ի հայրապետութեան Չա- քարիայ» նոյն ուխտին՝, թով. մեծօրի- ցին կը յիշէ Կիրակոս վերապեցւոյն քա- հանայական ձեռնադրութիւնը 1397ին՝ «ի տէր Պետրոս կպիսկոպոս սուրբ ջլոյն թա- ղէոսի»։ և 1441ին՝ նոյն Կիրակոսի կա- թողիկոսական ընտրութեան ժողովին մէջ կը նշանակէ «Գրիգոր վարդապետ և Է- պիսկոպոս սուրբ ջլոյն թաղէոսի»։ Հե- թանոսական փոթորիկը՝ որ այդ դարուն պայթեցաւ մեր աշխարհին վրայ, քանդեց և անշքացուց ամէն բան, ազգուն և ցրուած յիշատակներ միայն թողլով մեզ անցեալէն, որոնք շատ թանկագին են՝ վերակազմելու համար գէթ մեր պատմու- թիւնը, և առ ի չզոյէ իրականին՝ անով զուարճացնելու մեր մտքը։

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻՍ

1. Արրու. 1911, 224. — 2. Աստ՝ 74-75 հն. — 3. Աստ՝ 1926, 291. — 4. Աստ՝ 291. — 5. Հաւաք.

յրոհ. — 6. Հյպոս. 547. — 7. Հաւաք. յրոհ. — 8. Մեծօր. Պատ. զըւ. Բ. 1539 Ս. ՂԵԻ.

